ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ

2025թ. հուլիսի 7-ին, N 172-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԵՅՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետը և ՀՀ Արագածոտնի մարզի «Ակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սեյրան Մկրտչյանի 2025 թվականի հուլիսի 3-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սեյրան Մկրտչյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 7-ից օգոստոսի 8-ը ներառյալ:
2. Սեյրան Մկրտչյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Ակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ալինա Հարությունյանի վրա:
3. Սեյրան Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 11-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/8/2025 12:27:35 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ